տեսողաց», «եւ աւանդեցի զսա ի հրեշտակաբնակ ուխտն Խծկաւնս որ Տիկորայ վանք կոչի ի սբ. Սարգիս և ի սբ. Գրիգոր և ի սբ. Յակոբ ի ձեռն Պաւղոս վրդ.ին որ է ամենայն բարեաց պատճառ և ածապատիւ տր. Աբասայ եպս.ի և հաւր Սարգսի հեղի և ամենաբարոյ և այլ սբ. միաբան եղբարց»։

Աւետարանը գրուել է ՈՁԵ (= 1236) թուին, «ի դառն և ի նեղ ժամանակի յորում ամի առաւ մայրաքաղաքն Անի» ի պատուական եղբարց», երբ Հոգւոյ գալստեանը կը վերջաւորուի աւետարանի ընթերցումը՝ «Երանի որում թողութիւն տացէք և զպատարագին պատեհն զուք հոգայէք»։

Յիշատակարանը փակւում է հետեւեալ հատուածով. «Արդ տր. Աբասս եպս. եւ վրդս. Պաւղոս և հայր Գրիգոր և այլ միաբանք հաստատեցաք յեկեղեցւոյ զրանս որ զեղիական երկուշաբաթ աւրն զմին պատարագն անխաբան յամենայն ամի Բռնաբաթարների ձեռքով. համառօտ նկարագրում է «աստուածասաստ» այն բարկութիւնը, որ եկաւ Հայոց, Վրաց և Տաճկաց աշխարհների վերայ «ի մարդադէմ գազանաց», իրենց զօրավիգն ունենալով «գեզք և սատանէք»։ «Անթիւ էր աւերումն քաղաքաց և գաւառաց մինչեւ ի մեր սահմանս որ էր թուականիս ՈՁԵ»։

Ի վերջոյ Բռնաւորը «մեծ հաւատով և յուսով» խնդրում է «սիրաբար ի սբ. և

Պատկեր 9

աւետարանն (!) այս պայծառ՝ է քան զարեգակն և յիշատակ անջնջելի պարոն Բռնաւորին, ամէն»։

Իգնատիոսն ունի և իւր յատուկ յիշատակարանները. 16ա. 200բ. և 403ա։ Բերում ենք միայն առաջինը. «Զիգնատիոս գծող սբ. աւետարանիս և գծնողս նր. յիշ-